## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 4/1**

«06» փետրվարի 2023թվականի գ. Տեղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՔՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ**

**ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝**

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Աստղիկ Ղարագյոզյանը

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝**

**Տեղ համայնքի ավագանու թվով 9(ինը) անդամներ՝**

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Ղուկասյան Արագած Արշավիրի
4. Միքայելյան Աննա Միքայելի
5. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
6. Առաքելյան Վահե Վարդանի
7. Մարտիրոսյան Գևորգ Շիրազի
8. Դանիելյան ՍևադաՎիտալիկի
9. Դալլաքյան Արման Յուրիկի

**Բացակայում են Տեղ համայնքի ավագանու թվով 6(վեց) անդամներ՝ Կարեն Բաղդասարյանը, Արգամ Հովսեփյանը,Հայրապետ Հայրապետյանը, Նազիկ Բաղդասարյանը, Մասիս Ջեյնալյանը և Ասպետ Գալստյանը**, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայքնապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝ Աստղիկ Ղարագյոզյանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու **թվով 9 (ինը)** անդամները:

**ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝**

Համայնքի ղեկավարի խորհրդական Մարտունիկ Պողոսյանը, Տեղ համայնքի անանաբույժ Արագած Ղուլունցը, Արավուսի վարչական ղեկավար Արթուր Ջհանգիրյանը, Քարաշենի վարչական ղեկավար Հակոբ Հակոբյանը, Տեղի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատակիցները, Տեղ համայնքի աշխատակազմի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

**ԼՍԵՑԻՆ.**

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ և 65-րդ հոդվածներով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 6-ի 4-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը.

**1**.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 4-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
**2**.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 23-ի N57–Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
**3**.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
**4**.2022 թվականի 1-ին եռամսյակում ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքում Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները քննարկելու մասին:
**5**.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին:
**6**.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ (Սուբվենցիաներ) ստանալու նպատակով՝ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգում սուբվենցիոն ծախսային հաշիվ բացելու մասին:
**7**.ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքում տեղական տուրքի և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը սահմանելու մասին:
**8**.Տեղ համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին:
**9**.Տեղ համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությունը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին:
**10**.ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2022 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

**11.**ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականիմարտի 10 -ի N 16-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

**12.**ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 53-Ա, 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 66-Ա և 2018 թվականի ապրիլի 13-ի N 9-Ա որոշումների ուժը կորցրած ճանաչելու մասին:

**13.**Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023թվականի փետրվարի 6-Ի N04-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:

**14.**ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական չորրորդ նստաշրջանի 2-րդնիստի գումարման օրը սահմանելու մասին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

## 2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Ղեկավարելով ՀայաստանիՀանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու (այսուհետ՝ Ավագանի) կանոնակարգի 88-րդ և 89-րդ կետերի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Ավագանու 4-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմը՝
   1) Աննա Միքայելյան - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
   2) Արամ Դալլաքյան - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
   3) Կարեն Բաղդասարյան – «Ապրելու երկիր» խմբակցություն,
   4) Գալստյան Ասպետ - «Ապրելու երկիր» խմբակցություն

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(Զեկուցող՝ Ա. Ղարագյոզյան)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ կետով. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 57-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
1) Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 237819,2 հազ. դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 293427,7 հազ. դրամ» բառերով:
2) Որոշման 1-ին կետում կատարել լրացում.
3) հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ 55608,5 հազ. դրամ»:
2. Որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի նախատեսված հատվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:
2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**5. 2022 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Ղեկավարելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ 2023 թվականի փետրվարի 6-ի թիվ 4 արձանագրությունը , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի 10 կողմ, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով , Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն 2022թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարին՝ միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների

ամփոփման վերաբերյալ N4 արձանագրությամբ նշված խախտումները սահմանված ժամկետներում վերացնելու ուղղությամբ և վերջնական արդյունքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

## 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Ա. Ղարագյոզյան)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ կետով, հիմք ընդունալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-0, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

## 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾԱԽՍԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Ա. Ղարագյոզյան)**

Ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 25-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթներով ,հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 16-րդ կետերով սահմանված դրույթները, Տեղ համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացված նպատակային հատկացումները (սուբվենցիաները) բյուջեի ֆոնդային մաս տեղափոխելու նպատակով դիմել ՀՀՏԿԵՆ՝ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգում սուբվենցիոն ծախսային հաշիվ բացելու համար:
2.Աշխատակազմի գլխավոր մասնագետ հաշվապահին ապահովել սույն որոշումից բխող պահանջների կատարումը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

## 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ ԿԱՄ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման և վճարների մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը Տեղ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում տեղական տուրքի և կամ վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը համաձայն հավելված՝ N1-ի և N 2 –ի:

2. Աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

## 9. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1 կետով Տեղ համայնքի ավագանին որոշում է.
1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

## 10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Տեղ համայնքի բյուջեի 2022 թվականի կատարման չորրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ համածայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-6 հատվածների:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10 -Ի N 16-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով, համածայն համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-0, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համածայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու N 16–Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի փետրվարի 11-ից:

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետով և հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մասը Տեղ համայնքի ավագանին որոշում է.

1. Տեղ համայնքի տարածքում արգելվում է սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (կառաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ , բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ) տեղակայումը բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, կրթական և պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում:
2. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները՝ Տեղ համայնքի տարածքում կարող են գտնվել կրթական, մշակութային, առողջապահական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, բազմաբնակարան, անհատական բնակելի տներից, հանրային սննդի օբյեկտներից, հյուրանոցներից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից նվազագույնը 1000 մետր հեռավորության վրա:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

## 11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2022ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Ա. Ղարագյոզյան)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ - 9 դեմ – 0 ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 53-Ա, 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 66-Ա ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 9-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-0, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝
1.1. ՀՀ Սյունիքի մարզի «Տեղի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (հավելված 1)
1.2. ՀՀ Սյունիքի մարզի «Կորնիձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (հավելված 2) համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածների:

2. Հաստատել «Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 3-ի:

3.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու «Կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 53-Ա, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ենթակայության

համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 66-Ա և 2018 թվականի ապրիլի 13-ի N 9-Ա որոշումները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի փետրվարի 11-ից:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N04-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Ղեկավարվելով «Նորմատի վիրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետություն Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2022թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին N04-Ա որոշման հավելվածում կատարել լրացում» և համայնքի սեփականություն հանդիսացող գույքացանկից Կոռնիձոր գյուղի չգործող ոռոգման N1 ցանցի 837,1մ խողովակ ընդգրկել Կոռնիձոր գյուղի հրետակոծված ջրագիծ և կոյուղու բաժնում, այն ավելացնելով 837,1 մետրով:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքացանկում հաշվառված 837,1 մետր խողովակը օգտագործել համայնքի կարիքների համար վերականգնելով Կոռնիձոր բնակավայրի փողոցների վնասված և չգործող կոյուղու հատվածները:

3. Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ - հաշվապահին ապահովել, սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

## 15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական չորրորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օր սահմանել 2023 թվականի մարտի 10-ին:

Օրակարգի բոլոր հարցերը սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 14:50

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

-------------------- Դավիթ Ղուլունց
-------------------- Արամ Միրզոյան
-------------------- Վահե Առաքելյան
-------------------- Արման Դալլաքյան
-------------------- Արագած Ղուկասյան
-------------------- Աննա Միքայելյան
-------------------- Լորա Սիմոնյան
-------------------- Սևադա Դանիելյան
-------------------- Գևորգ Մարտիրոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՍՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ